ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 դեկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

169
(3019)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ա. ՔՈՉԱՐՅԱՆԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՔԵԿՈՒՅՑՈՎ ՇԱՆՏԱԺ Է ԱՆՈՒՄ ՔՊ-ԻՆ

ԱԺ ՔՊ-ական իրազեկ աղբյուրները «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցում են, որ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը իրեն օրենքից վեր է դասում. նա օրենքի կոպտագույն խախտումներով ձգձգում է 44-օրյա պատերազմի քննիչ հանձնաժողովի աշխատանքը ու դրա միջոցով շանտաժ է անում իր թիմակիցներին: ՔՊ-ականներն էլ լուռումունջ աչք են փակում Քոչարյանի ապօրինությունների վրա, չեն համարձակվում նրա դեմ դուրս գալ:

Սկսենք սկզբից. 44-օրյա պատերազմից մեկ ու կես տարի անց՝ 2022 թվականի փետրվարին, ԱԺ-ում ստեղծվեց քննիչ հանձնաժողով, որը պետք է զբաղվեր պատերազմի հանգամանքների ուսումնասիրությամբ: Քննիչ հանձնաժողովի ստեղծումից 4 տարի անց, սակայն, ո՛չ դրա զեկույցը կա, ո՛չ էլ անգամ՝ նշույլ: Միայն հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն է ամեն ամիս հայտարարում, թե զեկույցը պատրաստ է, շուտով կհրապարակվի, բայց այդպես էլ չի հրապարակվում: «ԱԺ կանոնակարգ» օրենքի 20-րդ հոդվածում սեւով սպիտակի վրա գրված է՝ «Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը մինչեւ վեց ամիս է, որը կարող է հանձնաժողովի առաջարկությամբ, Ազգային ժողովի որոշմամբ, երկու անգամ երկարաձգվել մինչեւ վեցական ամսով»: Քննիչ հանձնաժողովի գործունեությունը շուրջ երկու անգամ երկարաձգվել է. առաջին անգամ 2022 թվականի սեպտեմբերին՝ 6 ամսով, երկրորդ անգամ 2023 թվականի մայիսի 3-ի նիստում՝ 6 ամսով՝ մինչեւ սույն թվականի նոյեմբերի 3-ը: Բայց, արի ու տես, որ Քոչարյանը օրենքից դուրս է իրեն հայտարարել եւ արդեն 2 տարի է մատի փաթաթան է դարձրել հանձնաժողովի զեկույցը:

Հիշեցնենք, որ Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Անդրանիկ Քոչարյանը դեռ սեպտեմբերին հայտարարել է, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովն ավարտել է աշխատանքները, եզրակացությունը պատրաստ է, արդեն հոկտեմբերին նամակով դիմելու է ԱԺ նախագահին: Բայց չարեց: Իսկ նոյեմբերի 11-ին էլ՝ ԱԺ-ում լրագրողների հետ զրույցի ժամանակ, հայտարարել էր. «Զեկույցը, որպես այդպիսին, պատրաստ է: Շատ էջեր կան, միայն տեսաձայնագրությունները վերծանելը հսկայական աշխատանք է, որը նույնպես ավարտված է, Ազգային ժողովի լիագումար նիստերի դահլիճում այն ամբողջությամբ կհրապարակվի», - նշել էր Քոչարյանը:

Ով է գլխավոր դատախազի նոր տեղակալը, ինչ հուշամեդալի արժանացավ ու ինչ աղմկահարույց գործերով է եղել մեղադրող դատախազ: ՀՀ Գլխավոր դատախազությունը հայտնեց՝ հաշվի առնելով, որ 2024 թվականի նոյեմբերի 28-ից ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը թափուր է (ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում), Աննա Վարդապետյանը, «Դատախազության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Կոլեգիայի անդամներին է ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Արամ Արամյանի թեկնածությունը: Կոլեգիայի նիստից հետո գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի հրամանով Արամ Արամյանը նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ: Նշենք, որ դատախազ Արամյանը այս տարվա հուլիսի 1-ին՝ Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ, իրավակարգի ամրապնդման գործում ներդրած ավանդի եւ անբասիր աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով էր պարգեւատրվել: Նա առավել հայտնի է իբրեւ աղմկահարույց քրեական գործերով մեղադրող դատախազ: Վերջինս, մասնավորապես, եղել է «Դոն Պիպո» անունով հայտնի Արթուր Ասատրյանին արդարացնելու վերաբերյալ դատավճիռը բողոքարկած դատախազը: ***Մանրամասները՝ ArmLur.com կայքում:***

Նոյեմբեր ամսվա գործուղումները ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի համար նվերաշատ են եղել: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած «Հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողների նվերների հաշվառման ձեւաթղթի» համաձայն՝ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերի 18-ին աշխատանքային այցով մեկնել էր Վատիկան՝ Սուրբ Աթոռ, որի ընթացքում Հռոմի Սրբազան քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապից ստացել էր նվեր՝ կավե քանդակ «Քնքշանք եւ սեր» անվամբ: Քանդակի պատրաստման համար օգտագործվել է էնգոբայի տեխնիկան, որը կավին տալիս է հարթ, կաշվե տեսք, որն այնուհետեւ ամրացվում է մոմապատ պատինայով: Քանդակը մի կողմից պատկերում է Սրբություն Ֆրանցիսկոս Ասսիզենցուն, ով խաղաղության, մարդկության եւ բնության հանդեպ հարգանքի խորհրդանիշն է, իսկ մյուս կողմից՝ աղոտտվածության, վտանգված աշխարհի պատկերը: Նվերի՝ ստացողի կողմից գնահատված արժեքը ՀՀ դրամով կազմել է 37 հազար 978 ՀՀ դրամ: Իսկ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության դեսպանության կողմից նոյեմբերի 22-ին ստացել է նվեր թեյնիկ, բաժակների եւ թեյերի հավաքածու 60 հազար ՀՀ դրամ արժողության: «Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները չպետք է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացմանն առնչվող նվերներ ընդունեն կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն: Հակակոռուպցիոն կոմիտեի արդեն նախկին նախագահ Սասուն Խաչատրյանին ՀՀ Գլխավոր դատախազությունը նվիրել է 925 հարգի արծաթյա՝ «Գնոմո» տեսակի ժամացույց, որի քաշը կազմել է 7,23 գրամ, իսկ գոտին բնական կաշվից է: Ժամացույցն արժեցել է 94 հազար դրամ: ***Մանրամասները՝ ArmLur.com կայքում:***



ՀՀ դատախազությունը զբաղված է միայն, այսպես ասած, «նախկիններ»ի ապօրինի գույքի գործերով, սակայն ներկա իշխանությունները, որ բոլորի աչքի առջեւ թռիչքաձեւ հարստանում են, Աննա Վարդապետյանի աչքից վրիպում են: Օրինակ՝ 2023 թվականին քաղաքապետ դարձած Տիգրան Ավինյանը ակնհայտորեն բարելավել է իր եկամուտները: Տիգրան Ավինյանը Երեւանի ավագանու «Ելք» խմբակցության շարքային անդամից 2018 թվականի իշխանափոխությունից-հեղափոխությունից հետո միանգամից փոխվարչապետ դարձավ եւ 2018 թվականին ներկայացրեց իր առաջին հայտարարագիրը: Այդ օրերին Տիգրան Ավինյանը հայտարարագրել է շուրջ 15 հազար ԱՄՆ դոլար եկամուտ, բայց ուներ ընդամենը 600 հազար դրամ եւ 2475 հազար ԱՄՆ դոլար: Ավինյանի ներդրումներն արժեթղթերում կազմում էին 7000 ԱՄՆ դոլար: Տիգրան Ավինյանը 2018 թվականին հայտարարագրել է մեկ անշարժ գույք՝ ավտոտնակ: 2018 թվականին ներկայացրել է նաեւ տարեկան հայտարարագիր՝ հայտարարագրելով շուրջ 13 միլիոն 771 հազար դրամ: Համեմատելով այս 6 տարիների ընթացքում ստացած եկամուտները՝ «Ժողովուրդ» օրաթերթը արձանագրեց, որ Տիգրան Ավինյանի եկամուտներն անասելի ավելացել են՝ 2018 թվականին առկա 13 մլն դրամից դառնալով 45,5 մլն դրամ: ***Մանրամասները՝ ArmLur.com կայքում:***

ԶՐՈՒՅՑ

«ԱՂԱԶԱՐՅԱՆԸ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼ Է», ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանը անդրադարձել է Հովիկ Աղազարյանի՝ մանդատը վայր չդնելու որոշմանը:

-«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ՔՊ-ական պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը ՔՊ վարչության նիստի ժամանակ ներողություն է խնդրել Ձեզնից եւ Հրաչ Հակոբյանից: Ճի՞շտ է արդյոք այս տեղեկությունը, ինչպե՞ս կմեկնաբանեք:

-Այդպիսի բան չի եղել, հոգնեցի արդեն այդ թեմայով խոսելուց: Նման տեղեկություն չունեմ: 12-ին ես ներկա էի իմ օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ քննարկումների նպատակով: Թե ինչու է ներկա եղել պարոն Քոչարյանը, չեմ կարող ասել:

-Պարոն Գաբրիելյան, իսկ ինչպես եք վերաբերում պատգամավոր Հովիկ Աղազարյանի հայտարարությանը: Երեկ նա ասել է, որ չի պատրաստվում մանդատը վայր դնել: Ի՞նչ կասեք այս որոշման վերաբերյալ:

-Ես մեկ անգամ արդեն նշել եմ այս մասին. կուսակցությունում կան խաղի կանոններ, եւ պարոն Աղազարյանը նույնպես հաստատել է այդ խաղի կանոնները: Կարծում եմ, որ ավելի ազնիվ կլինի, որ այդ խաղի կանոնները, որոնք մշակել, հաստատել եւ ընդունել է նաեւ պարոն Աղազարյանը, որպես կուսակցական՝ նախ եւ առաջ ինքը համարի ընդունելի, առաջին հերթին՝ հենց իր դեպքում, քանի որ դա հարգանք է հենց իր նկատմամբ:

Մենք բոլորս կուսակցական ենք, եւ կան ընդհանուր խաղի կանոններ:

-Իսկ եթե վարչապետը Ձեզ դիմեր նման խնդրանքով, Ձեր մանդատը վայր կդնե՞ք:

-Իհարկե, քանի որ ես կուսակցական եմ, եւ որպես կուսակցության ղեկավար՝Նիկոլ Փաշինյանին ընտրել եմ նաեւ ես, վարչության համագումարն է ընտրել: Ինչու եմ ասում՝ բնականաբար, քանի որ այս վեցյոթ տարվա գործունեության ընթացքում չեմ տեսել մի որոշում, որը կապված լինի անձի հետ, եւ այդ անձը առնվազն լսելի եղած չլինի, իր տեսակետը չհայտնի: Այսինքն՝ ես ականատես չեմ եղել որեւէ անարդար որոշման: Եվ, բնականաբար, հենց այդ հիմքով էլ ասում եմ, որ մի օր վարչությունը, եթե ինձ էլ խնդրի, որ մանդատս վայր դնեմ կամ կուսակցությունը լքեմ՝ ներկայությունս համարելով ոչ նպատակահարմար, ապա վայր կդնեմ:

-Իսկ որքանո՞վ եք ճիշտ համարում, որ գործադիրի ղեկավարը պատգամավորին, անգամ խնդրանքով դիմի նման հարցով:

-Նիկոլ Փաշինյանը դիմել է՝ որպես կուսակցության վարչության նախագահ: Չեմ կարծում, որ այս հարցում գործադիր-օրենսդիր հարաբերակցություն կա: Որքանով որ ես տեղյակ եմ, պարոն Աղազարյանը լսելի է եղել, իր կարծիքը եւ տեսակետները՝նույնպես: Բայց այն խաղի կանոնները, որոնք նաեւ ինքն է հիմք ընդունել եւ հաստատել, ինքն էլ հենց խախտել է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրել է. «Երեւանի քաղաքապետը սպառնում է ՀՀ քաղաքացիներին, ովքեր իրենց սահմանադրական իրավունքն են իրացնում:

Հատուկ Տիգրան Ավինյանի համար հիշեցնում եմ ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածը, համաձայն որի՝

1. Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով:

2. Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով:

Իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ եւ 79-րդ հոդվածները սահմանում են գործադուլ հայտարարելու մանրամասները:

Այսինքն՝ այն ռեպրեսիաները, որոնք գործադրվում են կամ կգործադրվեն իրենց բողոքն արտահայտող քաղաքացիների նկատմամբ, հակաօրինական են:

Ստելը եւ ստով կառավարելն անընդունելի են. մարդկանց պահանջներին պետք է ականջալուր լինել»:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՆՈՐ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Ազգային անվտանգային վերահսկողական կոմիտեի նախագահ Արտյոմ Թումանյանը «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է, որ պաշտոնապես առաջադրվել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկած նախնական ընտրություններում՝ որպես Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի թեկնածու:

«ՍԻՐԵԼԻ՛ ՀԱՅՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵ,Ր ԳՅՈՒՄՐԵՑԻՆԵՐ,

Պաշտոնապես տեղեկացնում եմ ձեզ, որ առաջադրվել եմ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից առաջարկված նախնական ընտրություններին որպես Գյումրի քաղաքի քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարի թեկնածու:

Հստակ գիտակցում եմ, թե ինչ բարդ ու պատասխանատու բեռ եմ վերցնում իմ ուսերին, սակայն այս դժվարին ու օրհասական պահերին ինչպես միշտ եղել ու մնալու եմ իմ համաքաղաքացիների կողքին՝ անմնացորդ:

Հիմա ամեն ինչ լինելու է ձեր որոշումով:

ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՀԱՅ ԵՄ, ԿՐԿՆԱԿԻ ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ԳՅՈՒՄՐԵՑԻ ԵՄ» - գրել է Թումանյանը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՄԵՐԺԵՑ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

ՔՊ-ն հրաժարվում է մեկնաբանել Հովիկ Աղազարյանի՝ մանդատը վայր չդնելու որոշումը:

Դեկտեմբերի 2-ին Հովիկ Աղազարյանը հայտարարեց, որ մերժում է Նիկոլ Փաշինյանի՝ մանդատը վայր դնելու խնդրանքը:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանից եւ ՔՊ կուսակցության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանից հետաքրքրվեց՝ ինչպե՞ս են վերաբերում Աղազարյանի այս որոշմանը, քննարկե՞լ են ֆրակցիայում եւ հնարավո՞ր է նրան հեռացնեն ֆրակցիայից, սակայն թե՛ Ալեքսանյանը, թե՛ Կոնջորյանը նշեցին, որ դեռ չեն մեկնաբանում, բայց առաջիկայում կխոսեն այդ մասին:

ՈՎ Է ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՆԱՐԵԿ ՋԵՅՆԱԼՅԱՆԻՆ

ԿԸՀ-ն ներկայացրել է ԱԺ պատգամավոր ընտրված եւ լիազորությունները վաղաժամկետ դադարեցրած պատգամավորի մանդատը հաջորդ թեկնածուին տրամադրելու մասին թիվ 22 արձանագրությունը, ըստ որի՝ մանդատը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական մասի հաջորդ թեկնածու Ալեքսանդր Ավետիսյանին:

Նոր պատգամավորը, համաձայն ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, երդվեց. «Հանուն համազգային նպատակների իրականացման եւ հայրենիքի հզորացման ու բարգավաճման երդվում եմ բարեխղճորեն կատարել ժողովրդի առջեւ ունեցած պարտավորություններս, պահպանել ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները, նպաստել ՀՀ ինքնիշխանությանն ու շահերի պահպանմանը, անել ամեն ինչ քաղաքացիական համերաշխության, ազգային ու մարդկային արժեքների պահպանման համար»:

Հիշեցնենք, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը նոյեմբերի 29-ին ստացել էր ԱԺ նախագահի արձանագրությունն առ այն, որ ԱԺ պատգամավոր Նարեկ Ջեյնալյանի լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ «ՀՈՒՅՍԸ»

Եթե 1 հայ վերադառնա Ղարաբաղ, ապա 1 ադրբեջանցի պետք է վերադառնա «Արեւմտյան Ադրբեջան», եթե 1000 հայ վերադառնա «ազատագրված տարածքներ», ապա 1000 ադրբեջանցի պետք է վերադառնա «Արեւմտյան Ադրբեջան»: Նման հայտարարությամբ է հանդես եկել Ադրբեջանի խորհրդարանի հասարակական միավորումների եւ կրոնական կազմակերպությունների հանձնաժողովի նախագահ Ֆազիլ Մուստաֆան:

Ադրբեջանցու խոսքով՝ հայկական կողմը ձգտում է ապահովել, որ ճնշում գործադրվի Ադրբեջանի վրա՝Արցախի հայերի վերադարձի հարցում:

ԹԱԻԼԱՆԴԻ ՋՐՀԵՂԵՂԻ ՋՈՀԵՐԸ

Թաիլանդի հարավում ջրհեղեղների հետեւանքով առնվազն 25 մարդ է զոհվել: Այս մասին հայտնում է Bangkok Post-ը:

Բնական աղետների կանխարգելման եւ օգնության դեպարտամենտի տվյալներով՝ հարավային նահանգներում երկարատեւ հորդառատ անձրեւները հանգեցրել են մոտ 3,7 հազար բնակավայրերի հեղեղումների: Աղետի հետեւանքներն ընդհանուր առմամբ ազդել են ավելի քան 660 հազար տնային տնտեսությունների վրա:

Ջրհեղեղից տուժած համայնքները գտնվում են Թաիլանդի զբոսաշրջային հայտնի երթուղիներից հեռու: Զբոսաշրջիկների շրջանում տուժածների մասին տեղեկություններ չկան:

ԹՐԱՄՓԸ ԿՄԵԿՆԻ ՓԱՐԻԶ՝ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՏԱՃԱՐԻ ԲԱՑՄԱՆԸ

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահական ընտրություններում հաղթած Դոնալդ Թրամփը TRUTH սոցիալական ցանցում հայտարարել է, որ մեկնելու է Փարիզ՝ մասնակցելու 2019 թվականին մեծ հրդեհից հետո վերականգնված Աստվածամոր տաճարի բացման արարողությանը:

«Պատիվ ունեմ հայտարարելու, որ շաբաթ օրը ես կմեկնեմ Փարիզ՝ Ֆրանսիա՝ մասնակցելու հոյակապ եւ պատմական Աստվածամոր տաճարի բացմանը, որն ամբողջությամբ վերականգնվել է հինգ տարի առաջ տեղի ունեցած ավերիչ հրդեհից հետո»,- գրել է Թրամփը:

Ամերիկայի նորընտիր, բայց լիազորությունների կատարումը դեռ չստանձնած նախագահը գովել է Ֆրանսիայի առաջնորդ Էմանուել Մակրոնին շենքի վերականգնման ուղղությամբ կատարված աշխատանքի համար:

Թրամփը նշել է, որ տաճարի բացման օրը «շատ հատուկ է լինելու բոլորի համար»:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՄԵԿՆԵԼ Է ԻՐԱՆ

Դեկտեմբերի 3-ին Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը աշխատանքային այցով մեկնել է Մաշհադ (Իրան)՝ մասնակցելու Տնտեսական համագործակցության կազմակերպության (ՏՀԿ) արտաքին գործերի նախարարների խորհրդի 28-րդ նիստին:

Այս մասին հայտնում է Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայությունը:

Գերատեսչությունում ավելացրել են, որ այցի շրջանակներում Բայրամովը ելույթ կունենա Նախարարների խորհրդի նիստում, ինչպես նաեւ մի շարք երկկողմ հանդիպումների ժամանակ:

ԱՐԹՈՒՐ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ՝ ԲԴԽ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՆԻ ՀՈԳԻ Է ԿՈՂՄ ՔՎԵԱՐԿԵԼ

Բարձրագույն դատական խորհրդից երեկ հայտնել են. «Այսօր, օրենքով սահմանված կարգով, նշանակվել է ԲԴԽ նախագահի ընտրություն, որի արդյունքում ԲԴԽ նախագահ է ընտրվել Արթուր Աթաբեկյանը՝ 7 կողմ ձայներով: Շնորհավորում եւ աշխատանքային հաջող ընթացք ենք մաղթում պարոն Աթաբեկյանին»:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Կարեն Անդրեասյանը ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնից հեռացավ «առանց սկանդալի, մաղձի ու հիասթափության եւ այս թունավոր պաշտոնում՝ իբրեւ ամենաերկարը դիմացած ղեկավար»: Իսկ այժմ ԲԴԽ-ն ունի նախագահի հավանական թեկնածու՝ ԲԴԽ անդամ եւ Սնանկության դատարանի դատավոր Արթուր Աթաբեկյանը:

Արթուր Աթաբեկյանը 2004 թվականին աշխատել է Երեւան քաղաքի Արաբկիր համայնքի թաղապետարանում՝ որպես կոմունալ տնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ: 20 տարի անց առաջին կարգի մասնագետից դարձել է դատավոր եւ ԲԴԽ անդամ:

Հեղափոխությունը Աթաբեկյանի կյանքում եւս արգասաբեր եղավ. ՀՀ նախագահի՝ 2018 թվականի օգոստոսի 10-ի հրամանագրով նա նշանակվեց Սնանկության դատարանի դատավոր:

2022 թվականին, ՀՀ նախագահի որոշմամբ, Աթաբեկյանը նշանակվել է Սնանկության դատարանի նախագահ՝ երեք տարի ժամկետով, իսկ 2023 թվականին ՀՀ Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ: 2024 թվականին, ՀՀ նախագահի որոշմամբ, նշանակվել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր:

Այժմ ուսումնասիրենք, թե ինչ ունեցվածք ունի Արթուր Աթաբեկյանը:

Համաձայն դատավորի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ Աթաբեկյանը հայտարարագրել է 6 անշարժ գույք՝1 բնակելի տուն, 1 անհատական բնակելի տուն, 3 հողամաս, 1 ավտոկայանատեղի: Գույքերը գտնվում են Երեւան քաղաքում եւ Տավուշի մարզի Սարիգյուղում:

Որպես տվյալ տարվա սկզբում առկա տրանսպորտային միջոց՝ Աթաբեկյանը հայտարարագրել է 2019 թվականի արտադրության TOYOTA մակնիշի մեքենա, որը գնվել է 2022 թվականին:

Արթուր Աթաբեկյանը հայտարարագրել է նաեւ մեկ TOYOTA մակնիշի մեքենա, որը սեփականության իրավունքով իրեն չի պատկանում, սակայն շահագործվում է իր կողմից:

Դատավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2 մլն 355 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝6 մլն 700 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 19 մլն 979 հազար դրամ, որից 16 մլն 194 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդից:

Որպես քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ՝ Աթաբեկյանը հայտարարագրել է 264 հազար դրամ, որը ստացել է «ՀՀ Փաստաբանական ակադեմիա» հիմնադրամից:

ԲԴԽ անդամի ստացած վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 32 մլն 043 հազար դրամ, որը 2 բնակարանի եւ 1 ավտոկայանատեղու հիփոթեքային վարկ է, որի համար էլ եկամտահարկի վերադարձի օրենքով ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 3 մլն 521 հազար դրամ եկամտահարկի վերադարձ՝հիփոթեքային վարկի մայր գումարը մարելու համար:

ԲԴԽ նախագահի հավանական թեկնածու Աթաբեկյանը հանգստի համար կատարել է 3 մլն 500 հազար դրամի ճանապարհածախս: Վարկերի մարմանն ուղղել է 4 մլն 049 հազար դրամ:

Արթուր Աթաբեկյանը ՀՀ դատավորների միություն անդամ է»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ԱՐՑԱԽՆ Ի՞ՆՉ Է». ՓԱՇԻՆՅԱՆ

«Մեր ընդդիմադիր գործընկերներն անընդհատ վերադառնում են իմ հայտնի նախադասությանը՝ «Արցախը Հայաստան է եւ վերջ», այսօր դրան պետք է անդրադառնամ»: Այս մասին ԱԺ-ում 2025 թվականի բյուջեի նախագծի քննարկման ժամանակ հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նա հարց բարձրացրեց՝2018-ին ու դրանից առաջ Ղարաբաղն ի՞նչ էր, անկախ պետությո՞ւն էր, չէ՞, մինչեւ հիմա ասում են մեր բարեկամները եւ ոչ բարեկամները, եթե այդպես էր՝ ճանաչեիք:

«Մեզ որ վերագրում են դավաճանական քայլեր, դրանից առաջ ես այս դահլիճում պատգամավոր եմ եղել, մի քանի անգամ ընդդիմության կողմից նախաձեռնություն է եղել, որ ճանաչեք: Մենք ասել ենք՝ չէ՛, Ղարաբաղն անկախ պետություն չէ: Ղարաբաղն Ադրբեջա՞ն է, չէ՛, Ղարաբաղը Հայաստա՞ն է, չէ՛: Լավ ժողովո՛ւրդ, Ղարաբաղն անկախ չէ, Հայաստան չէ, Ադրբեջան չէ, ի՞նչ է:

Եթե մեր քաղաքականությունը գնահատում ենք ԼՂ հարցի այդ իրավիճակով, ապա մեր վարած այդ քաղաքականությունը կարելի է համարել սխալ, եթե մոռանանք, որ խնդրի ձեւակերպումն ի սկզբանե սխալ էր: Եթե հարցը ձեւակերպում ենք պետությունը պահելու շանս ստանալու առումով, ես պետք է ասեմ՝ այն քաղաքականությունը, որ մենք վարել ենք եւ վարում ենք, ոչ թե ճիշտ կամ սխալ է այլ միակ հնարավոր տարբերակն էր, որ այսօր մեզ շանս է տալիս պետություն ունենալու: Հետեւաբար, շատ բան կախված է նրանից, թե մենք ինչպես կօգտագործենք այդ շանսը եւ հնարավորությունը» - ասել է նա:

Փաշինյանն այնուհետեւ հիշեցրել է, որ երկու տարի առաջ ասել է՝ եթե մեզ հաջողվի պահել մեր պետականությունը 1-2 տարի, դա կնշանակի, որ մենք առաջիկա 100-ամյակում պետություն ունենալու իրական հնարավորություն ենք ստեղծել:

«Ահա երկու տարի առաջ ես կանգնած եմ ՀՀ խորհրդարանի ամբիոնին որպես ՀՀ վարչապետ եւ պիտի այսպիսով արձանագրեմ, որ միջնաժամկետում մեր դարավոր եւ հիմնական խնդիրը լուծված է, բայց մեզ չի կարելի ոչ մի վայրկյան թուլացնել մեր զգոնությունը:

Ես համոզված եմ, որ հենց մենք ենք այն կառավարությունը, այն խորհրդարանը, հենց մենք ենք այն ժամանակը, որը հնարավորություն է ասելու՝ ահա մենք երաշխավորեցինք Հայաստանի պետականության գոյությունն առաջիկա 100-ամյակի ընթացքում»,- նշել է նա:

ԵՐԵՎԱՆ–ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Նիդերլանդների ԱԳ նախարար Կասպար Վելդկամպի հետ: Այս մասին հայտնում են ԱԳՆ-ից:

Զրուցակիցները քննարկել են Հայաստանի եւ Նիդերլանդների միջեւ երկկողմ օրակարգի ընդլայնմանը միտված քայլերը՝ ընդգծելով մի կողմից՝ վերջին տարիներին ձեւավորված համագործակցության ամուր հիմքերը եւ մյուս կողմից՝ գործընկերությունը համատեղ ջանքերով առավել խորացնելու պատրաստակամությունը:

Արարատ Միրզոյանը եւ Կասպար Վելդկամպը հանգամանալից քննարկել են ՀՀ-ԵՄ գործընկերության խորացման հարցում առկա հեռանկարները:

Հայաստանի եւ Նիդերլանդների ԱԳ նախարարները մտքեր են փոխանակել տարածաշրջանային զարգացումների շուրջ:

ՅԱՎԱԼԻ ԴԵՊՔԻՑ 6 ԱՄԻՍ ԱՆՑ

ԱՍՏՂԵՐՆ ԷՐ ՎԱՅԵԼԵԼ ՈՒ ՉԷՐ ՊԱՏԿԵՐԱՑՐԵԼ՝ ՍԵՎԱՆԸ ՆԱԵՎ ՄԱՐԴԱԿԵՐ Է

Կոմպոզիտոր Անահիտ Մնացականյանի առեղծվածային մահվան դեպքից անցել է 6 ամիս եւ «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց քննչական կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ է պարզվել վարույթի կաղակցությամբ: Ի պատասխան՝ Կոմիտեից հայտնեցին, որ նախաքննությունը շարունակվում է:

Ասել է թե՝ դատաբժշկական փորձաքննության արդյունքները դեռ չկան, որպեսզի պարզվի՝ ինչ հանգամանքներում է կոմպոզիտորի մահը վրա հասել:

Զրուցեցինք Անահիտ Մնացականյանի մայրիկի՝Ռուզաննա Մնացականյանի հետ՝ հասկանալու համար, թե ի վերջո իրենք պարզեցի՞ն, թե ինչ կատարվեց:

Ի պատասխան՝ կոմպոզիտորի մայրը հայտնեց.

-Առեղծված չէ, աղջիկս կոմպոզիտոր էր, անվախ էր, կյանքը տեսնում էր իր բոլոր գույներով: Հրաշք, արեւ անձնավորություն, ով շատ սիրում էր բնությունը, ընկերներին, կենդանական աշխարհը, բոլոր ազգերի խոհանոցը: Ասում էր՝ ժամանակ ունենանք, միասին ճանապարհորդենք, ծանոթանանք բոլոր ազգային ճաշատեսակներին եւ երաժշտական գործիքներին: Ուսումնասիրում էր, շատ յուրահատուկ ձեւով տիրապետում էր տարբեր ազգերի գործիքների հնչյուններին: Դրանք օգտագործում էր իր ստեղծագործություններում՝ ներկայացումների, կինոների... Անցյալ տարի Պետերբուրգում՝ Շեքսպիրյան (Midsummer night's dream) ներկայացման կոմպոզիտորն էր: Ռեժիսորը Կարո Բալյանն էր: Մեծ հաջողության արժանացավ ներկայացումը: Նոր ներկայացման երաժշտության կապակցությամբ ստեղծագործելու առաջարկ ուներ, Ղազախստանում պետք է բեմադրվեր: Ուսումնասիրում էր Ղազախական գործիքները, որ կիրառեր: Խաղային ոլորտում ձայնային հնչյուններ էր ստեղծում: Մասնակցել էր մրցույթի, որտեղ հաղթել էր, հղումը կարող եմ ուղարկել: Այդ արդյունքի հիման վրա՝ հրավիրել էին Նորվեգիա՝ աշխատելու sound designer: Մշակ էր, սահմանամերձ գյուղերում ամեն շաբաթ-կիրակի գնում էր կրթելու երեխաներին՝բարեգործական հիմունքներով:

Անվերջ կարող եմ գրել նրա մասին՝մինչեւ երեկո, չեմ վերջացնի:

Ուզում եմ ասել՝շատ գործ ուներ, ժամանակ չուներ:

Ասաց՝ գնանք միասին մի տեղ, հանգստանանք, վերադառնանք, որ նորից գործերիս անցնեմ: Հետո ասաց՝չէ, ժամանակ չկա, այս 2 օրն է: Շատ էր ուզում լողալ, ասացի՝չմտնես հանկարծ, մամուռ է, տեմ: Նայեց իր սիրուն աչքերով, ասաց՝ լավ էլ մաքուր է: Պարզապես ռիսկերը չհաշվեց: Աստղերն է վայելել, ու չի էլ պատկերացրել, որ Սեւանը մարդակեր է: Շատ անվախ էր իմ գանձը:

Հիշեցնենք, որ հունիսի 1-ի առավոտյան ոստիկանության Սեւանի բաժին էր դիմել կոմպոզիտորի մայրը եւ հայտնել էր, որ իր 25-ամյա աղջիկը գիշերը այցելել է Սեւանի վարչական տարածքում գործող հանգստյան գոտի, ինչից որոշ ժամանակ անց ինքը տեղեկություն չի ունեցել աղջկանից, եւ կան կասկածներ, որ նա ջրահեղձ է եղել:

Արդյունքում՝ հունիսի 3-ին հայտնաբերեցին կոմպոզիտորի դին, ու մահվան հանգամանքները պարզելու նպատակով նաեւ նշանակվել էր դիակի դատաբժշկական փորձաքննություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ՝ ՆԵՐԽՈՒԺԵԼ ԵՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԱՆՏ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ այսօր առավոտյան՝ժամը 08:30-ին, իրավապահները դիմակավորված մտել են «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի 2-րդ տեղամաս, խուզարկություններ են սկսվել, ինչի արդյունքում դատապարտյալներ են բռնության են ենթարկվել:

Ըստ կալանավորվածների պատմածի՝ դատապարտյալների վրա կան մարմնական վնասվածքներ ու դեռ ավելին՝ մեկնարկած գործընթացի արդյունքում քրեական ենթամշակույթ կրող 3 դատապարտյալի տեղափոխել են «Երեւանական ենթամշակույթ կրող 3 դատապարտյալի տեղափոխել են «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ կամ բոլորին հայտնի ԱԱԾ մեկուսարան:

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթը հարց է ուղղել Գլխավոր դատախազություն եւ հետաքրքրվել՝արդյո՞ք գլխավոր դատախազը կգա Ազգային ժողով Հովիկ Աղազարյանին անձեռնմխելիությունից զրկելու հարցով:

«Ժողովուրդ» օրաթերթին ի պատասխան Գլխավոր դատախազությունից ասացին, որ նման բան չկա:

Ասել է թե, գլխավոր դատախազը առաջիկայում չի պատրաստվում գալ ԱԺ՝ Աղազարյանի «հետեւից»:

Նշենք, որ քիչ առաջ Հովիկ Աղազարյանը 24News-ի հետ զրույցում հայտնեց, որ չի պատրաստվում մանդատը վայր դնել:

«Խոր ափսոսանքով եմ նշում, որ ստիպված եմ մերժել մանդատը վայր դնելու վերաբերյալ ՀՀ վարչապետի խնդրանքը: Իմ կյանքի ծանրագույն որոշման համար՝ ի թիվս այլ հիմնավորումների, որոնք կարող են սուբյեկտիվ լինել, հիմք են հանդիսացել երկու հանգամանք»,- նշել է պատգամավորը:

Աղազարյանը կարծում է, որ մանդատը վայր չդնելու իր այս որոշումից հետո Գլխավոր դատախազը կարող է մտնել խորհրդարան ու առաջարկել իրեն զրկել անձեռնմխելիությունից:

ԱՍՖԱԼՏԻՆ ՓՌԵԼՈՒ ՕՊԵՐԱՑԻԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները 5 ավտոշարասյուն են կանգնեցրել ու բերման ենթարկել:

Ավելին, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն, հայտնի նախկին պաշտոնյաներից մեկի մեքենան արդեն երրորդ անգամ են կանգնեցել ու անձնակազմին տարել ոստիկանության տարբեր բաժիններ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նորանշանակ ՆԳ նախարարի նշանակումից հետո ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի հրահանգով ՀՀ-ում գործընթաց է մեկնարկել: Մեզ հասած լուրերի համաձայն՝ որոշվել է հանրապետությունում թիկնապահներով ու մի քանի մեքենաներով շրջող անձանց մեքենաները կանգնեցնել ու բերման ենթարկել՝ այդ ճանապարհով արգելելով հանրապետությունում մի քանի մեքենաներով ու թիկնապահներով պտտվելը: Արդեն 4 օր է, ինչ գործընթացը մեկնարկել է:

Իսկ ի՞նչն է եղել հրահանգի առիթը: Բանն այն է, որ նոյեմբերի 15-ին կայացած Կառավարության նիստում, Փաշինյանը, խոսելով իրավապահների աշխատանքի մասին, նշել էր, որ դատահրավական համակարգին իրենք տրամադրել են այն ամենը, ինչ պահանջվել է, եւ այժմ ակնկալում են արդյունքներ: Փաշինյանը Կառավարության նիստում նշել էր. «Ես որ գյուղ գնամ՝նույն բաներից են խոսում, որ «էս մեկից» բոլորը էն ժամանակ վախենում էին, հիմա էլ են վախենում: Նրանք, ովքեր մյուսներին վերեւից էին նայում, էլի անում են նույնը, ու ստացվում է՝ Հայաստանում թույլ իշխանություն է: Կներեք, ուրեմն թույլը ուժային կառույցներն են: Ես թույլ չեմ տա, որ որեւէ մեկը ինձ «թույլ» անվանի»:

Նյութերը՝Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ՕՊԵՐԱՏԻՎ

ՎԱՐՈՒՅԹ՝ 18 ԿԱՆԳՈՒՆ ԾԱՌ ՀԱՏԵԼՈՒ ՓԱՍՏՈՎ

Համայնքային ոստիկանության Տավուշի բաժնում նոյեմբերի 28-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ «Նավուրի անտառպետության» տարածքում ապօրինի ծառահատումներ են կատարվում:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանությունից, իրացնելով օպերատիվ տեղեկությունը՝ Տավուշի համայնքային ոստիկանները ապօրինի ծառահատում կատարելու պահին հայտնաբերել եւ բաժին են ներկայացրել Գանձաքար գյուղի բնակիչ 50-ամյա եւ 28-ամյա երկու տղամարդու:

«Նրանք խոստովանել են իրենց կատարած արարքը եւ նշված տարածքում մատնանշել ապօրինի հատված 18 թաց կանգուն ծառերի կոճղեր: Հայտնել են նաեւ, որ ապօրինի ծառահատումը կատարել են նոյեմբերի 25-ից նոյեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում, իսկ փայտանյութի մի մասն արդեն տեղափոխել են 50-ամյա տղամարդու առանձնատան տարածք: Նշված տարածքում հայտնաբերվել է նաեւ «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենա՝ բենզասղոցը սրահում»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ տղամարդիկ ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել են Բերդի քննչական բաժին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԻՋԵՎԱՆԻՆ Է ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ ՇՈՒՐՋ 5 ՀՈՂԱՄԱՍ

Տավուշի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրելով Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթով ձեռք բերված տվյալները, հարցումներ է կատարել Կադաստրի կոմիտե եւ պարզել, որ «Տավուշ» միջազգային հայրենակցական միության ՀԿ-ին Տավուշի մարզում անհատույց տրամադրվել են 5 հողատարածքներ, որոնք չեն օգտագործվում ըստ նպատակային նշանակության:

Դատախազի կողմից գրություն է հասցեագրվել Իջեւանի համայնքապետարան՝ վերոնշյալ հողամասերը համայնքի օգտագործմանը վերադարձնելու նպատակով: Իջեւան համայնքի իրավասու մարմինների կողմից դատախազի գրության հիման վրա ձեռնարկված գործողությունների արդյունքում՝ Իջեւան համայնքին են վերադարձվել ընդհանուր 3,1845 հա մակերեսով 5 հողամասերը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 2-ից 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 138 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ԱՅԴՊԵՍ ԷԼ ԵԿԵՂԵՑԻ ՉԿԱՌՈՒՑԵՑԻՆ

Դիլիջան քաղաքում եկեղեցի չկա, ավագանու որոշմամբ՝համայնքի հոգեւոր-մշակութային ոլորտի զարգացման գործում նշանակալի ավանդի համար քաղաքապետարանի ոսկե մեդալին արժանացած Տեր Շավարշ քահանա Սիմոնյանը տարիներ շարունակ հոգեւոր արարողություններ է կատարում ժամանակավոր եկեղեցու վերածված «Հին Դիլիջան» համալիրի սենյակներից մեկում: Դիլիջանի հին եկեղեցին՝ սեւ քարից կառուցված, եղել է ներկայիս «Ծիրան» սուպերմարկետի տեղում (ոստիկանության Դիլիջանի բաժնի ու Դիլիջանի թիվ 1 դպրոցի կողքը): Խորհրդային Միության տարիներին եկեղեցու հին շենքը տարբեր նպատակներով են օգտագործել՝ մշակույթի ակումբ, ընթերցարան եւ այլն: 1970-ականներին այդ շենքը կար ու օգտագործվում էր որպես քաղաքի՝ Շիրվանզադեի անվան կինոթատրոն: Բայց 70-ականների վերջերին, 80-ականների սկզբներին այդ շենքն էլ քանդվեց ու տեղում կառուցվեց «Դիլիջան» կինոթատրոնի շենքը:

Խորհրդային Միության փլուզումից հետո Դիլիջան քաղաքում պարբերաբար եկեղեցի են «հիմնում»: Մի «հիմնարկեք» արեցին 1990-ականների սկզբներին Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի (ի դեպ, դիլիջանցի) ձեռամբ: Նա, որպես պատրիարք, հոգեւոր ծառայության գնաց Երուսաղեմ, Դիլիջանում եկեղեցու կառուցման գործը այդպես էլ մնաց: Մանավանդ, որ նախկին «Սպուտնիկ» կինոթատրոնի տեղը (լճի ափին՝ դեպի հյուրանոց տանող հատվածում), համարեցին ոչ հարմար. այդտեղ կառուցվելիք եկեղեցու հիմքը գրունտային ջրերը կողողեին: Դիլիջանի քաղաքապետարանի «Դիլիջան» պաշտոնաթերթը նախկինում տեղեկացրել է, որ ամերիկահայ (այժմ լուսահոգի) Ջոն Սթիվենսը Դիլիջանում եկեղեցի կառուցելու համար 2005 թվականին Հայ առաքելական եկեղեցուն նվիրաբերել է 1 միլիոն ամերիկյան դոլար: բարերարը մահացավ, եկեղեցին էլ չկառուցվեց: 2013 թվականին Դիլիջանում ստեղծվել է եկեղեցու կառուցմանն օժանդակող հիմնադրամ՝ նպատակ ունենալով այդ գործի համար ներգրավել լրացուցիչ ֆինանսներ: Այդ նպատակով գումարներ են հանգանանակվել, սակայն հոգեւոր օջախն այդպես էլ չի կառուցվել: Հաղարծնի, Գոշի վանական համալիրներով, Ջուխտակ վանքով հայտնի Դիլիջանում եկեղեցի չկա:

ԸՆԴԱՄԵՆԸ 1077 ՀԱ ԱՇՆԱՆԱՑԱՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրան հարցնելով՝նոյեմբերի 25-ի դրությամբ Տավուշի մարզում որքա՞ն աշնանացան ցորեն է ցանվել, որ համայնքում՝ քանի հեկտար: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզի համայնքներում կատարվել է 1077 հա աշնանացան, որից Իջեւան-142.6 հա, Բերդ- 543.4հա, Նոյեմբերյան - 391 հա»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

2025-Ը ԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՆԻ....

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ՝ ԱՂԵՂՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԾԵՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2025 թվականին, մասնավորապես, սպասվում է անձնական աճի, կարիերայի եւ ֆինանսների զարգացում:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ է սպասվում կենդանակերպի նշաններին անհատապես:

Այսպիսով՝ այս անգամ անդրադառնում ենք աղեղնավորներին եւ այծեղջյուրներին:

Աղեղնավորները եւս կրակի տարերքի կրողն են: Աղեղնավորը համարվում է «տաք» ու «չոր» նշան, իսկ նրա գույնը մանուշակագույնն է: Նշանի հետ կապված առասպելները վերաբերում են Էնկիդուին (Գիլգամեշի էպոսից), կենտավրոս Քիրոնին եւ Օրիոնին: Մարդու մարմնի սխեմատիկ բաժանման 12 մասի մեջ այն վերահսկում է կոնքերն ու շնչառական ուղիները:

Աղեղնավորների համար 2025 թվականը կդառնա յուրահատուկ տարի՝ ընդգծված նոր հնարավորություններով, անձնական աճով եւ հոգեւոր բացահայտումներով:

Ամուսնացած աղեղնավորների համար տարին խոստանում է ամրապնդել հարաբերությունները: Եթե կան միայնակ աղեղնավորներ, ապա տարվա սկիզբը խոստումնալից է նոր սիրային հարաբերություններ սկսելու համար, սակայն երկրորդ կեսը կարող է բերել որոշ դժվարություններ, որոնք պահանջում են համբերություն:

2025 թվականն աղեղնավորների աշխատանքային ոլորտում հաջողությամբ կսկսվի, սակայն տարվա երկրորդ կեսը պահանջում է ավելի մեծ կենտրոնացում եւ վերլուծական մոտեցում: Ընթացիկ ծախսերը կպահանջեն ավելի խելացի պլանավորում, սակայն տարեվերջին հնարավոր են անսպասելի եկամուտներ եւ հաջող ներդրումներ:

2025 թվականին Աղեղնավորների առողջությունը կայուն կլինի, սակայն տարվա ընթացքում անհրաժեշտ կլինի ուշադրություն դարձնել հոգեկան եւ ֆիզիկական հանգստին: Սթրեսի կառավարումն ու ոռոգ ապրելակերպի պահպանումն աղեղնավորների կյանքում կարեւոր դեր կունենան:

Տարին կնշանավորվի հոգեւոր հետաքրքրություններով՝ սկսած մեդիտացիայից մինչեւ նոր փորձառություններ, ինչպիսիք են սեմինարներն ու հոգեւոր ճանապարհորդությունները: Սա կօգնի ավելի խոր հասկանալ ինքներդ ձեզ եւ ձեր կյանքի ուղին:

Արշավային ուղղությունները 2025 թվականի գլխավոր թեման է: Տարին լեցուն կլինի նոր մշակույթներ եւ վայրեր բացահայտելու հնարավորություններով: Միջազգային ուղղություններով ճանապարհորդությունները հատկապես հաջող կլինեն:

Այծեղջյուրները հողի տարերք են: Հին հունական դիցաբանությունում այծեղջյուրը նույնացնում էին Ամաֆլեայի այծի հետ, որը կաթով կերակրել է մանկիկ Զեւսին Կրետե կղզում: Կա մեկ այլ վարկած եւս, որ անալոգային դիցաբանությունում այծեղջյուրը համարվում էր Պանի՝ անտառի եւ որսի աստված, Դիոնեսի ուղեկիցը՝ ծնված այծի նման ոտքերով, մորուքով եւ կոտոշներով: Պանը աստվածներին օգնել է մարտերում, մասնավորապես Զեւսին՝ տիտանների դեմ պայքարի ժամանակ:

Գալիք 2025 թվականը այծեղջյուրների համար խոստանում է լինել հագեցած ինչպես հաջողություններով, այնպես էլ մարտահրավերներով լի:

Այսպիսով՝ տարեսկիզբը հաջողություններով լի կլինի աշխատավայրում եւ բիզնեսում: Ապրիլից մինչեւ օգոստոսն ընկած ժամանակահատվածում աստղերը բարենպաստ են լինելու նոր հնարավորությունների եւ ֆինանսական աճի համար: Չնայած նրան, որ ֆինանսական աճ է խոստանում տարին, պետք է եկամուտը կառավարել խելամտորեն, քանի որ որոշ ամիսներ կպահանջեն զգուշավորություն ծախսերում: Տարեվերջին հնարավոր են պաշտոնի բարձրացումներ եւ նոր առաջարկներ՝ հատկապես նրանց համար, ովքեր ցանկանում են փոխել ոլորտը:

Սիրային կյանքում տարին կտրուկ փոփոխություններ է բերելու: Մինչեւ մարտ հնարավոր են դժվարություններ եւ շփման խնդիրներ, սակայն փոխըմբռնումն ու երկար զրույցները կօգնեն հաղթահարել դրանք: Հունիսից մինչեւ սեպտեմբեր ընկած ամիսներին հնարավոր են բաժանումներ, սակայն հոկտեմբերը խոստանում է ամուսնության լավ հնարավորություն միայնակ այծեղջյուրների համար:

Այծեղջյուրների առողջությունը 2025 թվականին կլինի հիմնականում կայուն, սակայն տարեսկզբին հնարավոր են քրոնիկ հիվանդությունների սրացումներ: Սեպտեմբերից մինչեւ հոկտեմբեր խորհուրդ է տրվում հատուկ ուշադրություն դարձնել մարսողության հետ կապված խնդիրներին:

Տարվա ընթացքում ուղեւորությունները կլինեն արդյունավետ: Մայիսը բարենպաստ է օտարերկրյա ճամփորդությունների համար՝ մասնագիտական եւ կրթական առումներով:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՆԻ ՈՒՂԵՎՈՐ Է ՕԳՏՎԵԼ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻՑ

Նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 1-ը մետրոպոլիտենում ուղեւորափոխադրումը կազմել է 530 հազար 970 ուղեւոր:

Կատարողականը՝100.2% է:

Գիծ է դուրս բերվել 2962 շարժակազմ, որից՝

712-ը՝ երեք վագոնանի,
1222-ը՝ երկու վագոնանի,
1028-ը՝ մեկ վագոնանի:

Մետրոպոլիտենի բոլոր կայարաններում գանձապահները վաճառում են QR կոդեր:

ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻ ՄՈՏ ԱՎԵԼԻ ՔԱՆ 1000 ԲԵՌՆԱՏԱՐ ԿԱ

Ռուս-վրացական սահմանին գտնվող Վերին Լարս անցակետի մոտ ավելի քան 1,000 հայկական բեռնատար կա կուտակված: Այս մասին տեղեկանում ենք Հյուսիսային Օսեթիայի ճանապարհային երթեւեկության կազմակերպման կենտրոնից:

Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս միջազգային նշանակության ավտոմոբիլային ճանապարհը բաց է բոլոր տրանսպորտային միջոցների համար, բայց խցանումները չեն վերանում:

Այս պահի դրությամբ անցակետը հատելու համար 3,608 տրանսպորտային միջոց է հերթագրված, որոնցից 1,057-ը հայկական են:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 1 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԹԵԼ-ՍԵԼ»

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ՍՊԱՌՎԵԼ ԵՆ ԺԱՄԱՆԱԿԻՑ ՇՈՒՏ

Նոյեմբերի 29-ին՝ ժամանակից շուտ, սպառվել են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲ ընկերության առաջնային հրապարակային տեղաբաշխման (IPO) առաջարկի բաժնետոմսերը: Ընկերությունը նախապատրաստվում է ցուցակման (listing) փուլին, հայտ կներկայացնի բորսայում գնանշվելու համար:

1,5 մլրդ դրամ ընդհանուր արժեքով շուրջ 4 մլն բաժնետոմսերի հրապարակային առաջարկի (IPO) մասին «ԹԵԼ-ՍԵԼ» ընկերությունը հայտարարել էր սեպտեմբերի 18-ին: Բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացրել է «Արմբրոկ» ներդրումային ընկերությունը, իսկ արժեթղթերի պահառությունը՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան: Մեկ բաժնետոմսի արժեքը 400 ՀՀ դրամ էր, նվազագույն քանակը առաջին գնման դեպքում՝ 10 բաժնետոմսն էր, առավելագույնը՝ 500 հազար բաժնետոմսը:

Առաջնային հրապարակային վաճառքի վերջնաժամկետը 2024թ. նոյեմբերի 30-ն էր, սակայն ընկերության բաժնետոմսերը սպառվեցին ավելի շուտ, որը փաստում է բաժնետոմսերի նկատմամբ մեծ հետաքրքրվածության մասին:

Հազարավոր անհատներ, կազմակերպություններ դարձել են «Թել-Սել»-ի բաժնետերեր՝ կատարելով իրենց ամենակարեւոր ներդրումը: Ընկերության հանրային առաջին տեղաբաշխման (IPO) առաջարկի բաժնետոմսերի գնորդներն ինչպես ֆինանսական ոլորտի, տնտեսության իրական հատվածի ներկայացուցիչներն են, այնպես էլ շարքային քաղաքացիները:

Telcell ընկերությունը նպատակ ունի տարեկան գրանցած շահույթի առնվազն 50 տոկոսը տեղաբաշխել որպես դիվիդենտ՝ գրավիչ դառնալով ներդրողների համար:

«Telcell-ն արդեն 17 տարի ընթանում է առաջանցիկ զարգացման ճանապարհով՝ պարբերաբար ներկայանալով իր նոր նախագծերով ու ձգտելով կատարելության:

Մեր ընկերության բաժնետոմսերը շուկա դուրս բերելու, հաճախորդների ու գործընկերների համար հրապարակային, բաց դառնալու մեր ձգտումը ոչ այլ ինչ էր, քան այս երկար ու հագեցած բիզնես ճանապարհի տրամաբանական շարունակություն:

Ուրախ եմ եւ հպարտ մեր թիմով, ում հետեւողական աշխատանքի շնորհիվ նաեւ կարողացանք շահել մարդկանց, մեր հաճախորդների վստահությունը՝ դրանով իսկ նոր բաժնետերերի միջոցով ներգրավելով լրացուցիչ ներդրումներ, որոնք կուղղվեն հեռանկարային խոշոր նախագծերի իրականացմանը»,- ընդգծում է Telcell ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանը:

Telcell վճարահաշվարկային ընկերությունը հիմնադրվել է 2007թ. Հայաստանում՝ որպես առաջին վճարային տերմինալային ծառայություններ մատուցող ընկերություն: Ներկայում այն ունի ամենամեծ տերմինալային ցանցը եւ ճկուն Telcell Wallet հավելվածը: Ընկերությունը կարողացել է պահպանել առաջատար դիրքերը խիստ մրցակցային դարձած շուկայում եւ դիվերսիֆիկացրել պորտֆելը մի շարք ռազմավարական ուղղություններով՝ ստեղծելով էկոհամակարգային բիզնես:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ՝ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻՆ

Նոյեմբերի 29-ին կայացել է «Կոնվերս» բանկի ներկայացուցիչների հանդիպումը Հայաստանի գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: BSCOSMO գործարարների ակումբի գործընկերությամբ կայացած միջոցառման ժամանակ ներկայացվեց արտարժույթի փոխանակման Converse Markets առցանց հարթակը եւ պարտատոմսերի թողարկմամբ ներդրումների ներգրավման առաջարկը:

«Կոնվերս» բանկի ներդրումային դեպարտամենտի տնօրեն Գրիգորի Ջաքարյանը, ողջունելով մասնակիցներին, անդրադարձ է կատարել բանկի պատմությանն ու նշանակալից իրադարձություններին, ապա խոսել է թվային փոխակերպման, բիզնեսի ֆինանսավորման եւ աջակցության ընդգրկուն գործիքակազմի մասին:

Գրիգորի Ջաքարյանը, մասնավորապես, ասել է. «Ներկայում «Կոնվերս» բանկն իր կորպորատիվ հաճախորդներին է առաջարկում ֆինանսավորման լայն գործիքակազմ՝ սկսած վարկավորումից, լիզինգից մինչեւ առեւտրի ֆինանսավորում՝ ակրեդետիվ ու ֆակտորինգ: Արդեն մի քանի տարի է, ինչ բանկը որդեգրել է ներդրումային բանկային բիզնես ուղղություն ունենալու ռազմավարություն, ինչի շրջանակում առաջարկում է ներդրումային լայն հնարավորություններ՝ սկսած բրոքերային գործունեությունից, պարտատոմսերի թողարկումից մինչեւ արտարժույթի փոխարկման թվային լուծումներ: Առաջարկների ցանկն աստիճանաբար ընդլայնվելու է»:

«Converse Markets-ը ժամանակակից թվային լուծում է, արտարժույթի փոխարկման արդի առօրեական մեթոդ, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ էֆեկտիվ փոխարժեք, համեմատել այն տարբեր բանկերի տրամադրած փոխարժեքների հետ եւ կայացնել արդյունավետ որոշում»,- ներկայացնելով հարթակը բիզնեսի ներկայացուցիչներին՝ ասել է «Դիլինգ» կենտրոնի ղեկավար Անի Նազարյանը:

Նա նշել է, որ հարթակում, բացի փոխարկումից, հնարավոր է նաեւ կատարել փոխարժեքի գնանշման հարցում, ներկայացնել փոխարկման պատվեր, տեղեկատվություն ստանալ արժութային շուկայում spot գների վերաբերյալ: Այս պահին հարթակը հասանելի է բանկի՝ իրավաբանական անձ հաճախորդներին՝ 36 արժութային զույգերով փոխարկում կատարելու հանրավորությամբ: Հարթակի հնարավորություններն ու բիզնեսին հասանելիությունը աստիճանաբար կընդլայնվեն:

Այնուհետեւ անդրադարձ է կատարվել բանկի մեկ այլ ծառայությանը՝ պարտատոմսերի թողարկման եւ տեղաբաշխման միջոցով ֆինանսների ներգրավմանը, կապիտալի շուկաներին հասանելիության մեծացմանը:

«Կոնվերս» բանկի Կորպորատիվ ներդրումային բանկային ծառայությունների բաժնի պետ Էլեն Քարիմյանը ներկայացրել է այս հարցում համագործակցության հնարավորությունը եւ նշել ֆինանսների ներգրավման այս եղանակն ընտրելու շարժառիթները. «Ընկերության համար տվյալ ժամանակահատվածում պարտավորությունների անփոփոխ պայմանները, բանկի ֆինանսավորումից անկախ լինելը, գրավի եւ երաշխավորության անհրաժեշտության բացակայությունը եւ այլն: Հատկանշական է, որ թողարկման եւ տեղաբաշխման ողջ գործընթացը կազմակերպվում է բանկի կողմից»:

Շեշտվել է, որ Հայաստանի ֆոնդային բորսայում պարտատոմսերի ցուցակման դեպքում թողարկողները կօգտվեն պետական աջակցությունից:

Բանկի ներկայացուցիչները պատասխանել են մասնակիցների հարցերին, քննարկվել են համագործակցության հնարավորությունները:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 20.12.2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

. Լոտ՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր, Եղեգնաձոր ք., Անդրանիկի փողոց, 17 շենք, 38 հասցեում գտնվող 94 քմ բնակարան,

. Լոտի մեկնարկային գինը՝ 16500000 (տասնվեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

. Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար), Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

. իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am , www.borsa.am

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿ»

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎՈՒՄ ՆՈՐ ՀՈՒՇԱԴՐԱՄ

2024 թվականի դեկտեմբերի 2-ին ՀՀ կենտրոնական բանկը շրջանառության մեջ է դնում «Գոհար Գասպարյանի ծննդյան 100-ամյակ» արծաթե հուշադրամը:

Գոհար Գասպարյանը (1924-2007 թթ.)՝ օպերային արվեստի մեծանուն հայ երգչուհիներից է (քնարակոլորատուրային սոպրանո), ՀԽՍՀ (1953 թ.), ԽՍՀՄ (1956 թ.) ժողովրդական ամենահայտնի արտիստներից:

Ծնվել է Կահիրեում, երաժշտական կրթությունը ստացել է ծննդավայրում, երգեցողության դասեր է առել է Ֆելդմանից եւ Վ. Կարրոյից: 1940 թ.-ից ելույթներ է ունեցել Կահիրեում, 1947 թ. եղել է Եգիպտոսի ռադիոյի մեներգչուհի:

1948 թ. բնակություն է հաստատել Հայաստանում: 1949 թ.-ից եղել է Հայաստանի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգչուհի: Երեւանում նրա առաջին բեմելը նշանավորվել է Լակմեի դերերգով (Լ. Դելիբի «Լակմե»):

Գոհար Գասպարյանին անվանել են «Հայաստանի սոխակ». նրա ձայնն առանձնացել է ընդարձակ դիապազոնով, ճկունությամբ, երանգների հարստությամբ, անցումների թեթեւությամբ: Գասպարյանն ունեցել է 4000-ից ավելի համերգ. երգել է աշխարհի նշանավոր բեմերում՝ Նյու Յորքի Քարնեգի հոլում, Փարիզի Գրանդ օպերայում, Մոսկվայի Մեծ թատրոնում:

Երգչուհու երգացանկում տեղ է գտել ավելի քան 500 ստեղծագործություն: Նա կատարել է 23 օպերաների գլխավոր դերերգեր՝ Անուշ, Շուշան (Ա. Տիգրանյանի «Անուշ», «Դավիթ Բեկ»), Օլիմպիա, Կարինե (Տ. Չուխաճյանի «Արշակ Բ», «Լեբլեբիջի Հոր-հոր աղա»), Ռոզինա (Ջ. Ռոսինիի «Սեւիլյան սափրիչ»), Մարգարիտ (Շ. Գունոյի «Ֆաուստ»), Լուչիա (Գ. Դոնիցետտիի «Լուչիա դի Լամերմուր»), Վիոլետտա, Ջիլդա (Ջ. Վերդիի «Տրավիատա», «Ռիգոլետտո»), այլ:

1964-2007 թթ. դասավանդել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (1973 թ.-ից՝ պրոֆեսոր):

Գոհար Գասպարյանն արժանացել է մի շարք պետական մրցանակների եւ պարգեւների. ԽՍՀՄ (1951 թ.) եւ ՀԽՍՀ (1965 թ.) Պետական մրցանակներ, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1984 թ.), Երեւանի պատվավոր քաղաքացի (1984 թ.), Լենինի շքանշան (1984 թ.), «Ժողովուրդների բարեկամության» շքանշան (1984 թ.), «Սբ Մեսրոպ Մաշտոց» շքանշան (1994 թ.), այլ: Գոհար Գասպարյանի անունով անվանակոչվել է փողոց Երեւանում:

Հուշադրամի ձեւավորումը հետեւյալ կերպով է. դիմերես՝ Գոհար Գասպարյանի բեմական կերպարը՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի ֆոնին, հայկական զարդանախշ:

Դարձերես՝ Գոհար Գասպարյանի դիմապատկերը, վարդերի եւ սոխակի պատկեր:

Էսքիզների հեղինակ՝ Վարդան Վարդանյան:

Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

Տեխնիկական չափանիշներ
Անվանական արժեքը՝ 1000 դրամ
Մետաղը/հարգը՝ արծաթ 9250
Քաշը՝ 33,6 գ
Տրամագիծը՝ 40,0 մմ
Որակը՝ պրուֆ
Դրամաշուրթը՝ ատամնավոր
Թողարկման քանակը՝ 300 հատ
Թողարկման տարեթիվը՝ 2024

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ՊՈԵՄԻ ԽԱՆՋՅԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հայաստանի ազգային պատկերասրահում կայացել է ««Խոսող կտավներ» ներառական նախագիծ. «Անլռելի զանգակատուն»» շնորհանդեսը:

Ծրագիրն իրականացվել է Կոմիտասի ծննդյան 155 եւ Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակների հոբելյանական միջոցառումների շրջանակում:

«Խոսող կտավներ» ներառական նախագծի շրջանակում ստեղծվել են Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմի՝ Գրիգոր Խանջյանի 9 պատկերազարդումների շոշափելի կրկնօրինակներ: Ծրագրի նպատակն է տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիների համար հասանելի դարձնել Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմի խանջյանական նկարազարդումները: Շոշափելի նկարը կտավի ռելիեֆային պատկերն է, որը ստեղծվում է հիպալերգեն պլաստիկից: Շոշափելի պատկերազարդն ապահովված է՝

տիֆլոմեկնաբանությունով (կտավի ձայնային նկարագրություն. զուգահեռ ընթերցվում է «Անլռելի զանգակատուն» պոեմի այն հատվածը, որը ներկայացված է պատկերում),

QR-կոդով՝ YouTube-յան ալիքում տեղադրված տիֆլոմեկնաբանությունների հղումով,

համապատասխան երաժշտությամբ:

Նախագծի հնչյունային ռեժիսորն է Վահան Նահապետյանը, որը, պատկանելով նախագծի թիրախային խմբին, հանդես է գալիս նաեւ որպես «Խոսող կտավներ» նախագծի գլխավոր փորձագետ:

Նախագծի արդյունքում ստեղծված «Անլռելի զանգակատուն» պոեմի պատկերազարդների շոշափելի պատճենները փոխանցվելու են Հայաստանի ազգային պատկերասրահին՝ շոշափելի կատալոգի տեսքով:

Ծրագիրն իրականացրել է «Սարեր» մշակութային ՀԿ-ն:

ՇՐՋԱՅՑ՝ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՎ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աշխատակիցները հերթական շրջայցն են կատարել ՀՀ Տավուշի մարզ՝ պետական միջոցներով վերականգնվող հուշարձանների ամրակայման, նորոգման եւ վերականգնման ընթացքն ու առկա խնդիրները տեղում քննարկելու նպատակով:

ՀՀ Տավուշի մարզի Սրվեղ վանական համալիրի (պետ. ցուցիչ՝ 10.9.5.1, հանրապետական նշանակության) տարածքում աշխատակիցները ծանոթացել են Սբ. Աստվածածին եկեղեցում մեկնարկած վերականգնման աշխատանքներին:

ՀՀ Տավուշի մարզի Կիրանց բնակավայրի Սբ. Երրորդություն եկեղեցու տարածքում նախարարության աշխատակիցները քննարկել են զանգակատան իրականացման հարցերը:

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՄԻԱՆՁՆՅԱ ԱՌԱՋԱՏԱՐ

Հայաստանի տղամարդկանց 85-րդ առաջնության առաջին խմբի մրցաշարի ավարտին մնացել է 3 խաղափուլ:

Ինչպես հայտնում են Հայաստանի շախմատի ֆեդերացիայից, 8 խաղափուլից հետո միանձնյա առաջատար շարունակում է մնալ ՖԻԴԵ-ի վարպետ Սարգիս Սարգսյանը, ով ունի 7 միավոր:

ՖԻԴԵ-ի վարպետ Բենիկ Ագասարովը 5.5 միավորով երկրորդ հորիզոնականում է:

Գրոսմայստեր Մամիկոն Ղարիբյանը 5 միավորով երրորդ հորիզոնականում է:

ԱՎԱՐՏԵՑ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԿԱՐԻԵՐԱՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի եւ Երեւանի «Փյունիկ»-ի ֆուտբոլիստ Արտակ Գրիգորյանն ավարտեց պրոֆեսիոնալ կարիերան:

37-ամյա ֆուտբոլիստը 52 հանդիպման է մասնակցել Հայաստանի ազգային հավաքականի կազմում: 496 խաղ նա անցկացրել է ակումբային կարիերայում:

Արտակ Գրիգորյանը Հայաստանի առաջնություններում ամենաշատ հանդիպում անցկացրած 3-րդ ֆուտբոլիստն է: Նա նախորդ մրցաշրջանում «Փյունիկի» հետ դարձավ Հայաստանի չեմպիոն՝ իր կարիերայում 6-րդ անգամ: Գրիգորյանը հայկական ակումբների կազմում եվրագավաթային խաղերում եւս բացարձակ ռեկորդակիր է անցկացրած խաղերի թվով:

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԱՎԱԹԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կայացել է Անգլիայի գավաթի 2024/2025 մրցաշրջանի երրորդ փուլի վիճակահանությունը: Այս փուլում մրցաշարին են միանում Պրեմիեր լիգայի եւ Չեմպիոնշիփի 44 թիմ՝ համալրելով երկրորդ շրջանի 20 հաղթողների շարքը: Երրորդ տուրում ընդհանուր առմամբ կխաղան 64 թիմեր, որոնք կազմել են 32 զույգ:

Անգլիայի գավաթի գործող գավաթակիր «Մանչեսթեր Յունայթեդը» որպես մրցակից ստացել է Լոնդոնի «Արսենալին», որը կհյուրընկալի այս հանդիպումը: Պրեմիեր լիգայի թոփ-ակումբների մյուս զույգերն են՝ «Մանչեսթեր Սիթի»-«Սալֆորդ», «Լիվերպուլ»-«Աքրինգթոն», «Չելսի»-«Մորեքեմբ», «Թամֆորդ»-«Տոտենհեմ», «Աստոն Վիլա»-«Վեսթ Հեմ»:

Այս փուլում հանդիպումները կկայանան 2025 թվականի հունվարի 11-12-ը, իսկ երրորդ տուրը բաղկացած կլինի մեկ խաղից:

Հիշեցնենք, որ այս մրցաշրջանից Անգլիայի գավաթի խաղարկությունում վերախաղարկումները չեղյալ են հայտարարվել առաջին շրջանից:

● *Դեկտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Ինչ տարբերություն, թե ում հետ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հյութերի դրոմավորման համար ձեռք բերված դրոմատիկները կորցնելու դեպքում ի՞նչ պատասխանատվություն կարող է առաջանալ:

Հմայակ Մալխասյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9.6-ի 5-րդ կետի համաձայն՝ չօգտագործված կամ վնասված դրոշմապիտակների վերադարձը նշված հոդվածով սահմանված ժամկետներից ուշացնելու, նշված հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքերում հարկային տեսչությունների կամ մաքսատների կողմից հետ չընդունվելու կամ դրոշմապիտակների կորստի դեպքերում համապատասխան փաստն արձանագրվելու օրվա դրությամբ հաշվարկվում են հարկային պարտավորություններ այն չափով, որ չափով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով կհաշվարկվեին դրանք, եթե դրոշմապիտակների տեսակին, քանակությանը եւ տարողությանը համապատասխանող ապրանքները հարկ վճարողի կողմից իրացված լինեին:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Առեւտրի եւ ծառայությունների մասին» ՀՀ օրենքում 9.2-րդ հոդվածով սահմանված են ՀՀ-ում արտադրված եւ ՀՀ ներմուծված շշալցված կամ ցանկացած այլ ձեւով տարայավորված այն ապրանքների ցանկն ու ԱՏԳ ԱԱ ծածկագրերը, որոնց օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը 2013թ. հուլիսի 1-ից պարտադիր է: Այդ ցանկում թանը ներառված չէ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ն է լինում օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության բովանդակությունը:

Արմինե Բաղմանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը մասնավորապես ներառում է՝

- թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը եւ ժամկետը,
- տրամադրված պաշարների քանակն՝ ըստ կարգերի, եւ հանքի տարեկան արտադրողականությունը,
- ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով,
- օգտակար հանածոյի եւ (կամ) ուղեկից բաղադրիչների անվանումը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությանը կցվում են համապատասխան փորձաքննություններ անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը եւ լեռնահատկացման ակտը, որոնք թույլտվության անքակտելի մասերն են:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կոմիտասի ծննդյան 155 եւ Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակների հոբելյանական միջոցառումների շրջանակում երեկ Հայաստանի ազգային պատկերասրահում բացվել է ««Խոսող կտավներ» ներառական նախագիծ Անլռելի զանգակատուն»» շնորհանդեսը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*